

աւանդելու բարձիս վերայ ազի արտասունք կթափեն իմ՝ իրանցից հեռանալուս համար. երբ որ իմ բերանս զմրուած, փակուած՝ էլ չեմ կարող իմ վերջին շնորհակալութեան խօսքս կմկմալով ասել նորանց, որոնց մինչեւ իմ մահս իմ վերայ հարազատ սէր ունեցան. երբ որ աշխարհիս ձայն ու ձունն ու մարդիս սրտին ախորժելի ձայներն իմ ականջիս էլ չեն լսուելու, այն ժամանակն՝ այն ժամանակը Քո ձեռքդ կաւանդեմ իմ հոգիս: Աւրախ ու գոհ սրտով վերեւ կձգեմ իմ փակուող աչքերս դէպի Քեզ եւ Քո ողորմութիւնիդ կյանքնեմ ամենին, որոնք թանկ են իմ սրտիս, Քո հովանաւորութեանդ տակը լինին: Դու կմնաս նոցա համար, ինչպէս որ ինձ համար եւս մնումես յաւիտենական կեանքի դաշտերումն:

(Թարգ.)

Գ. Ե. Ա.

Աթէ ամեն մի փոքր ի շատէ զարդացած ժողովրդի պարտականութիւնն է հետաքրքրուիլ և ծանօթանալ իւր դրացի ժողովրդի ազգային և կրօնական կեանքին, սովորութիւններին և վարք ու բարքին, իւր դրացիական յարաբերութիւնները զիտակցական և նպատակայարմար անելու համար, ևս առաւել հարկ անհրաժեշտ է մեզ՝ Աովկասեան Հայերիս մանաւանդ ի ներկայումս՝ հետաքրքրուիլ և ծանօթանալ մեզ հետ բնակակից Աովկաստաբնակ Ռուսների ազգային և կրօնական կեանքին ու պատմութեանը, որոց կենսական պահանջները շահերն ու վնասները միւս նոյն մերը զարձան այն օրից, երբ նոքա ոտք դրեցին Աովկասեան երկրները:

Ըս այժմ «Արարատ» ի ընթերցողաց ծանօթացնելու համար թէ 988 թուականից, երբ Ռուսները ընդունեցին քրիստոնէական կրօնը, մինչև ցայսօր — այս 894 տարուայ ընթացքում՝ ո՞րքան ազանդներ և ինչպէս ծագեցան նոցա մէջ, արժան ենք համարում շարունակաբար հրատարակել «Արարատ» ի թերթերում Վօրրօտվօրսկի պրօֆէսորի՝ Ռուսների մէջ ծագած այլ և այլ ազանդների մասին զբաղւած նորագոյն շարադրութիւնը, որ շատ հետաքրքրական է:

Տեղեկութիւններ Ռուսաց մէջ ծագած աղանդաւորների մասին, որոնց հետեողները իւրեանց անձը կոչումեն « ժողովուրդ Աստուծոյ, հոգեւոր քրիստոնեայ »:

Պրոֆեսոր Գորբաովորսկիի շարադրութիւնից « Լիւդի Բօժիի »:

1. ХЛЫСТЫ — ՄՏՐԱԿՈՂՆԵՐ:

« Աստուծոյ ժողովրդոց » հերետիկոսութեան իսկութիւնը կա-
յանումէ այս համոզման մէջ, որ մարդը զանազան առտուածա-
հաճոյ կերպով, որին կոչումեն նորա խորհրդական ձախ, հասնումէ
այն կարգութեան խորհրդական յարմարութեան, երբ ինքը Աստուած
բնակումէ նորա մէջ եւ ներգործումէ նորանում եւ նորա միջո-
ցով ըստ իւր խոստմանը « Բնակեցայց ի նոսա եւ եղէց նոցա Աս-
տուած, եւ նորա եղիցին իմ ժողովուրդք »: (Բ. Կորնթ. 6 գլ.
16: Դեւա. 26 գլ. 12): « Աստուծոյ ժողովուրդը » իւրեանց մո-
լորութեանց մէջ չեն զանազանում ամենաուրբ երբորդու-
թեան անձնաւորութիւնքը, որոնք բնակումեն Աստուծոյ ընտրե-
լոց սրտումը: Հերետիկոսութեան առաջին ժամանակները այս-
պիսի ընտրեալները ըստ մեծի մասին կոչումէին իւրեանց անձը
քրիստոս, առանց զանազանելու իւրեանց գէմքը ճշմարիտ Քրի-
ստոսի Աստուծոյ Որդւոյ գէմքից: Անցեալ 18 դարու վերջե-
րումը մինչեւ ցայժմ նոցա մեծ բաժինը իւրեանց անձը առա-
ջագրումեն Ժաշաշ, խօսող եւ ներգործող սուրբ Հոգւոյ զօրու-
թեամբ, որ նոցա մէջ բնակումէ ըստ սուրբ Գրոց « Հոգի Աստու-
ծոյ բնակեալ է ի ձեզ »: (Հռոմ. 8 գլ. 9: Ա. Կորնթ. 16 գլ. 19 եւ-
այլն:) Այսպիսի մարգարէները կարող են լինել իսկապէս քրիս-
տոսներ, Աստուծոյ որդիներ ըստ Գրոց (Հռոմ. 8 գլ. 14): Ա-
ղանդաւորները միայն Հօր Աստուծոյ անձնաւորութեանը չեն
գիտցում, « որ բնակումէ ի ընդ անմատոյց », բայց եւ նա ըստ
նոցա կարծեաց միանգամ երկնից երկիր իջաւ ճշմարիտ Յիսուս
Քրիստոսի հաւատը վերահաստատելու համար եւ բնակեցաւ
մարդկանց մէջ Դանիւս Փիլիպիչի կերպարանքով, որից սկսումէ
պատմութիւնը հերձուածք « մարակողաց »:

« Աստուծոյ ժողովրդոց » աղանդի ծագման պատմութիւնը
լցուած է մեծամեծ ցնորքներով: Ըստ նոցա աւանդութեանց,
երբ որ առաջուայ Քրիստոսի պայծառափայլ սուրբ հաւատը

սկսաւ տկարանալ եւ կորցրեց իւր մարքութիւնը՝ խելօք մարդիկ ժողովեցան սուրբ տեղում. «սկսան բարձրացնել իւրեանց բազուկները դէպի երկինք եւ կանչել Աստծուն երկնքից իջնել դէպի երկիր, Տէր, Տէր երեւիր մեզ, Տէր, երեւիր խաչի վերայ կամ պատկերի, որ լինի մէկ նշան, որին մենք ազօթենք եւ հաւատանք»¹): Գլխածն Աստուած իբր լսեց խելօք մարդկանց ազօթքը Ալէքսէյ Միխայիլովիչի թագաւորութեան սկզբում 1645 թ, Վլադիմիրսկի նահանգում, Ստարոգոլբսկի վոլոստում (շինական հասարակութիւն), Գործղին սարի վրայ, Միխայիլ եւ Բարինին գիւղերի մօտ երկնքից իջաւ Հայր Սարաւօթն հրեղէն ամպով եւ բոցակէզ կառքով՝ հրեշտակներով շրջապատած²): Այսպէս Աստուծոյ ժողովրդոց համար կատարեցաւ մարգարէի նախատեսութիւնը Աստուծոյ երկիր իջնելու համար, որ ասումէ. «Ահա աւուրք գան, առէ Տէր, միշտ մերձեցայց առ ձեզ, եկից յայցելութիւն ընակչաց երկրի... եւայն (եզր. 6 գլ. 18, 19):

Յետ Աստուծոյ անմարմին երկիր իջնելուն հրեշտակներն համբարձան երկինքը. Իսկ Հայրն Աստուած ընդունեց ամենամաքուր Դանիլա Փիլիպիչի մարմինը եւ սկսաւ երեւիլ աչաց:

Այս Դանիլա Փիլիպիչն շինական Իւրեւիցիի գաւառի՝ զինուոր էր եւ յետոյ զինուորական ծառայութիւնից փախստական: Ում նկնց արգեօք նորա միտքը հերետիկոսական կարծիքներով խմբեցաւ, յայտնի չէ: Միայն զինուորութիւնից փախչելուց յետոյ նա երեւեցաւ Ստարի գիւղում. Քասարօմսկի նահանգում, 30 վերստ հեռի Քասարօմսկ քաղաքից, ընակեցաւ իւր եղբոր Ֆեդօր Փիլիպովի տանը եւ իւր անձը Ա-հ-ա-ռ-ի հրատարակեց. «Փախնալով, մի գուցէ ճանաչուի եւ կալանաւորուի, սուտ Սարաւօթը քիչ ժամանակ գտնվում էր տանը, ըստ մեծի մասին խօսարդայ ման էր գալիս զանազան տեղերում եւ ծածկապէս քարոզում էր իւր թիւր վարդապետութիւնը Քասարօմսկի, Վլադիմիրսկի, Նիժնեգորոգսկի նահանգներում: Դերասարաւօթի վարդապետութիւնը նորա հետեւողները բովանդակեցին 12 կանոն-

(1) Երգ մարդկանց «Աստուծոյ» ձեռագիր, ներքինի և մարակոզ ազանդաւորաց մասին, երես 78:

(2) Այս մարմնառութիւնը Սարաւօթի երգվումէ «Ժողովրդոց Աստուծոյ» մէկ երգում «իջաւ երկնից Տէրը երկիր և նորա ծնունդը էլաւ ի Ստարոգոլբսկի» և այլն:

ների մէջ, որը յանձնվում է մէկ մարգարէից միւսին: Ահա այդ վարդապետութիւնը:

1. Ես եմ Աստուած մարգարէներից գուշակուած, մարգկային աղբի հոգւոց փրկութեան համար երկրորդ անգամ երկնքից իջի, ուրիշ Աստուած չկայ բաց ինձանից:

2. Ձկայ եւ չպտտէք ուրիշ վարդապետութիւն:

3. Դէպի ինչ կոչումն որ կոչվեցիք, նոյն կոչման մէջ էլ կացէք:

4. Պահեցէք Աստուծոյ պատուիրանը, որսորդ էլէք բոլոր տիեզերքին:

5. Մի խմէք թմրեցուցիչ խմիչք, եւ մարմնական ցանկութիւն մի գործէք:

6. Մի ամուսնանայք, ու որ ամուսնացած է թող բնակի կնոջ հետ միասին իբրեւ իւր քրոջ հետ, ինչպէս նշանակուած է եւ հին սուրբ Գրքերի մէջ: Չամուսնացածները թող չամուսնանան. իսկ ամուսնացեալները թող մի անգամից աւելի չամուսնանան:

7. Ազտեղի խօսքեր եւ վատաբանութիւն ձեր բերանից դուրս չգան (գեւ եւ այլն):

8. Հարսանիք եւ կնուծքատուն պէտք չէ՝ երթալ եւ գինարբութեան խորհուրդների մէջ չգտնուիլ:

9. Չգողանալ իսկ եթէ որ մի կոպէկ անգամ գողանայ, ահեղ դատաստանի օրը կգնեն փողը նորա գլխի վրայ, եւ երբ որ այդ գրամը հայուի կրակով նորա գլխի վրայ, այն ժամանակ միայն թողութիւն կգտնի մեղուցեալը:

10. Այդ կանոնները պահել ծածուկ, ոչ ոքի ոչ հօր եւ ոչ մօր չյայտնել, եթէ մտրակով անգամ ծեծեն եւ կրակով էլ այրեն պէտք է համբերել, որի փոխարէն, ըստ օրինակի հին մարտիրոսաց հաւատոյ՝ կտանան երկնքի թագաւորութիւնը. իսկ երկրումը հոգեւոր յաջողութիւն:

11. Միմեանց մօտ գնացէք, աղ ու հաց տարէք, սէր արէք եւ իմ պատուիրանները պահեցէք:

12. Հոգւոյն սրբոյ հաւատացէք:

Դանիւա Փիլիպովն մի քանի տարի իւր վարդապետութիւնը քարոզեց եւ տարածեց մի քանի նահանգներում, մանաւանդ իւր հայրենեաց սահմաններում, որտեղից հրաւիրեց Քաստրօմսկի նահանգը Իվան Տիմոֆէեւ Սուսլովին՝ իւրպէս անձնըն-

տիր մարդին, որին անուանեց իւր ամենասիրելի որդի քրիստոսը:

«Աստուծոյ ժողովուրդը» Իվան Տիմոֆիէւիչի վրայ պատմում են շատ հրաշքներ: Ըստ նոցա աւանդութեանց Վլադիմիրսկի նահանգում Մուրոմսկի գաւառում Ստարոգուբսկի վոլոստում, Մաքսակովայ գիւղի մէջ, մօտ Զիարլեցկի — Պօգոստին բնակում էին հարիւրամեայ ծերունիք՝ այր եւ կին, որ կոչւում էին Սուսլով՝ պ. Նարիշկենի ստրուկները: Բարեպաշտական կենցաղավարութեամբ: Յանկարծ հարիւրամեայ պառաւր յղացաւ եւ ծնաւ արու զաւակ 1616 թ.: Նորածին երեխայն վեց շաբաթ մնաց անկնունք, այն պատճառաւ, որ քահանայն զարմացած այգպիսի դէպքի վրայ՝ չհամաձայնեց նորան մկրտել. եւ ոչ ոք էլ չյօժարեցաւ կնքահայր դառնալ նորածին մանկանը: Ծերունին թափառական շրջումէր գիւղից գիւղ, պտրտումէր մէկ մարդ կնքահայր դառնալու իւր երեխային, եւ ոչ ոքի չգտաւ: Յուսահատութեամբ դարձաւ իւր տունը. երբ ճանապարհին հանդիպեց ժովովրդոց ամբօխին, ծերունին սկսաւ երկրպագութիւն տալ եւ խնդրել, որ նորանցից մէկը կնքահայր դառնայ իւր նորածին երեխային: Ամէնքը ծիծաղեցան. միայն մէկը նրանցից շատ պատուական արտաքին կերպարանքով համաձայնեց նորա առաջարկութեանը եւ ինքը մկրտեց երեխային անուն դնելով Իվան: Քահանայն՝ երբ եկեղեցումն էր՝ այն աստիճան զարմացած էր, որ չէր հասկանում թէ իւր շուրջը ինչ էր պատահում. եւ երբոր ուշը վրէն եկաւ, աչքը բաց արաւ եկեղեցոյ գաւթի աթոռի տակումը:

Իվան Տիմոֆիէւին մինչեւ երեսնամեայ հասակն բնակեց իւր ծնողաց տանը եւ օգնումէր նոցա գիւղական ծառայութեանց մէջ: Երբ ծնողքը մեռան, նա վերաբնակեց Միխայիլի գիւղում, Եգորեւսկի ծխումն Սկա գէտին մօտ եւ ոչ հեռի այն տեղից ուր երեւցաւ Դանիլա Փիլիպովն: Եգորեւսկի եկեղեցում՝ այն ժամանակ կային եօթը քահանաներ. որոնցից մինը միայն երկրպագութիւն էր տալիս նորան, միւսներն ամենեւին բանի տեղ չէին դնում, որովհետեւ աստուածութիւն եւ դատաստան գեռ նորան չէին տուած, բայց շուտով երբ որ լցուեցաւ Իվան Տիմոֆիէւի 33 տարուայ հասակը, Դանիլա Փիլիպովը կանչեց Իվանին Ստարիյ գիւղն եւ տուեց նորան աստուածութիւն իւր տանումն, որ այն

ժամանակից սկսած կոչուել տուն Աստուծոյ, այսինքն գարձներով նորան իւր հերետիկոսութեանը՝ արեց իրան գլխաւոր օգնականը (1649): Այն աստուածային տանից Գերասարաւօթի եւ Գերաքրիստոսն, ըստ պատմութեան ժողովրդոց Աստուծոյ, երեք գիշեր կարգաւ համբարձիւմէին երկինքը վկայների առաջ: Այսպէս կատարեցաւ հին մարգարէութիւնը. «Յայանեսցի որդի իմ՝ Յիսուս ընդայնոցիկ, զի ի նոսա բնակեալ է» (Եղբ 7 գլ. 28):

Գերաքրիստոս Խիան Տիմօֆէեւին ստանալով աստուածութիւն Դանէլից՝ իւր առաջին բնակութիւնը հաստատեց Միխայիլից գիւղումը եւ սկսաւ քարոզել Գերասարաւօթի վարդապետութիւնը, աւելացնելով եւ իրանից շատ բաներ: Նորա հետ միասին բնակուէր այն տանը մի աղջիկ, որին Աստուծոյ ժողովուրդը կոչումէին Դասար Լասար-ժայ. (հաւատարու է, որ Գերասարաւօթի աղջիկը լինի) ընտելալ եւ ասար-աժաժի իւր երեք եղբայրներով, որոնց անունն էր Խիան, Ֆէդօր եւ Սիմէօն, որոնք ամէնը աշակերտ էին Գերաքրիստոսին եւ նրանց հետ միասին աղօթք էր անում նորա տանը 1):

Խիան Տիմօֆէեւին իւր աշակերտներից ընտրեց 12 անձը իւր վարդապետութեան համախոհներից, որոնց անուանեց իւր առաքեալները եւ որոնց հետ սկսաւ աստանդական շրջել շրջակայ գիւղօրայքումը իւր վարդապետութիւնը քարոզելու համար, մանաւանդ Սկա եւ Վօլգա գետերի ափերի բնակչաց: Ոչ հեռի նորա ծննդեան տեղից, Պաւլով գիւղումն Նիժնիգօրոգսկի նահանգում՝ նա հաստատեց իւր գլխաւոր բնակութիւնը. «բնակութիւնը այն քրիստոսի, ասումէ սուրբն Գիմիտրի, էր Պաւլով գիւղում, Սկա գետի եզերքում, Նիժնի քաղաքից 60 վերստաչափ հեռաւորութեամբ» 2):

Այս բնակութիւնից կամ օթեւանից նա ճանապարհ էր ընկնում հեռի Սկա եւ Վօլգա գետերի ստորին կողմերն իւր սուտ

(1) Շրջեցնումէր իւր հետ մի գեղեցիկ օրիորդ կոչելով նրան իւր մայրը, նորա հաւատացողները կոչումէին նորան Լաստուածածին, Իսկ օրիորդը սուս ազգաւ ծնած էր Նիժնիգօրոգ գաւառի, Լանդիս գիւղում գուսար էր մի զոհհի, — պատմումէ նորա մասին Գիմիտրի եպիսկոպոսն (Բօզիսկ մասն Գ. յօդուած 18):

(2) Բոզիսկ գլ. ԺԸ. մասն Ե:

վարդապետութիւնը տարածելու համար: Ահանաւեսը, որ հաղորդել է այդ տեղեկութիւնները սուրբ Նիմիարեայ Բախօմի ճգնաւորի միջնորդութեամբ, տեսել է նորան աղօթելու ժամանակը (այդ աղօթքը կոչվում է Բագենիէ Վիւզէյ Բօժիիի) Բաբօտկա գիւղում: «Եկաւ ասում է այն ժամանակ քրիստոսն այն Վօլգա գետի վրայ, Բաբօտկա կոչուած գիւղն Նիժնի—Նովգորոդից 40 վերստ հեռաւորութեամբ»:

«Այն գիւղում գետի եզերքին կայ մի եկեղեցի վաղեմի եւ դատարկ, ուր ժողովեցան այն ժամանակ նորա հաւատացեալները աղօթելու»: Այդ եկեղեցին էր նոյնպէս տուն Աստուծոյ գերաքրիստոսին եւ այստեղ նա ընդունուէր իւր հետեւողներից աստուածային երկրպագութիւն:

Հերիտիկոսական վարդապետութիւնը Սոււլովի՝ որ չէր հերքում եկեղեցւոյ ¹⁾ տրտաքին ծիսապաշտութիւնը, շուտ տարածեցաւ Նիժնիգորոդսկի, Վլադիմիրսկի, Քաստրօմսկի եւ Մոսկովսկի նահանգների սահմաններում եւ բուն իսկ Մոսկուայի մէջ յայտնեցան ամէնք: Ալէքսէյ Միխայլովիչ Թագաւորի հրամանով, պատմումեն «Աստուծոյ ժողովուրդը», Սուլով գերաքրիստոսը եւ 40 անձինք նորա հետեւողներից բանտարկուեցան: Նրկար միջոց հարց ու փորձ արին իմանալու համար, թէ ինչ բանումն է կայանում նոյա թիւր վարդապետութիւնը, բայց հերիտիկոսներն չյայտնեցին:

Այն ժամանակ նորանց ամենին պատժեցին մարմնով Պօգոստայ գիւղում եւ գերաքրիստոսին միայն, «Աստուծոյ ժողովրդոց» ասելով, այնքան ծեծեցին, որքան հարուած տուին միւսներին եւ նա մնաց կենդանի: Պօգոստայ գիւղում այն սարը սուրբ երրորդութեան եկեղեցւոյ մօտ, որ նրանց պատժեցին, այն օրից կոչվում է Ղօլիոնսկայեա Գօրա, այսինքն լեռն մերկութեան, այն պատճառաւ, որ նորանց մերկ պատժեցին: Աղտնդաւորների չարչարանայ օրը է տօնը 40 մօնկանց, որ մինչեւ յայժմ տօնում է «Աստուծոյ ժողովուրդը»:

(1) Գերաքրիստոսը Աստուծոյ եկեղեցին հայհոյումէր, բայց տաճարը մանկու ժամանակ նա չէր արգելում սուրբ պատկերները յարգել, երկրպագութիւն տալ խաչին, մօտենալ քահանայի աջը համբուրելու եւ օրհնութիւն ստանալու համար: Բօլիսկ մասն Գ. գլ. Ը.

Երբ որ իրանց տեղում չկարողացան իմանալ աղանդաւորներից նորանց վարդապետութեան ինչ լինելը, ամենին զօրականներով ուղարկեցին Մոսկուայ: Ալէքսէյ Միխայելովիչ թագաւորը հրամայեց Պատրիարք Նիկանին հարց ու փորձ անել նրանց (1658 թ.): Պատրիարքը ի զուր աշխատումէր իմանալ սուտ քրիստոսից, թէ՛ ինչ բանի վրայ է կայանում նորա վարդապետութիւնը եւ յայտնեց այդ մասին թագաւորին: Ալէքսէյ Միխայելովիչ հրամայեց Բոյարին Մարտովին հարցութիւնք անել իսկապէս, բայց նա հրաժարեցաւ, իբր թէ այն պատճառի, որ իսկոյն հասկացաւ Իվան Տիմոֆէեւի առտուած լինելը: Յետոյ հրամայեց Կնեազ Օդոյեւսկուն անպատճառ իմանալ Սուսլովի վարդապետութեան խորհուրդը: Օդոյեւսկին կալանաւորեց Իվան Տիմոֆէեւէն բանտումը «ժխտնի—գլխորում» չարչարեց նրան իբր թէ զանազան տանջանքներով, մեծ տապալի վրայ դրած փոքր ինչ կրակով վառել տուեց տակը, բայց ոչինչ չկարաց տեղեկանալ: Անյաջող տանջանքներից վերջը գլխատելու տեղը բերելով Իվան Սուսլովին խաչեցին Սպասսկի գրեների պատի վրայ: Այդ տեղը մինչեւ ցայժմ է մեծ յարգութեան տեղի «Աստուծոյ ժողովրդոց» համար:

Խաչեալ Իվան Տիմոֆէեւին հոգին աւանդեց, ինչպէս պատմումէ «Աստուծոյ ժողովուրդը», իւր աստուածային կամօք, իջեցրին պատի վրից պահպաններն եւ թաղեցին կառավման տեղումն կամարակապ գերեզմանի մէջ: Թաղումը պատահեցաւ Ուրբաթ օր, բայց Շաբաթ Կիրակէի լուսանալուն, հենց որ Վերափոխման զանգերը խփեցին, Իվան Տիմոֆէեւին յարութիւն առաւ եւ երեւեցաւ իւր աշակերտաց: Տէրութիւնը այս բանը իմացաւ սուտ քրիստոսին կրկին կալան եւ վերստին խաչեցին նոյն իսկ տեղում, բայց երկրորդ անգամ յարութիւն առաւ եւ սկսաւ ծածուկ զանազան տեղերում քարոզութիւն անել իւր վարդապետութիւնը իւր անձը աստուածամարդ կոչելով (1660—1671 թ.¹) իսկ ուրիշները կանչումէին Սաարոգուբսկի քրիստոս

(1) Իվան Տիմոֆէեւի բոլոր զատաստանը, «Աստուծոյ ժողովուրդը» ստորագրումեն հետագայ երգում, որ պարզումէ նորա և սուտ խաչելութիւնն և յարութիւնը:

փրկիչ, որ խաչեցաւ իւր հաւատացեալների հոգւոց փրկութեան համար. եւ ուրիշները խոստովանումէին նորան Քրիստոսի փոխանակ նոյն իսկ Մոսկուայում :

Զ. Տ. Զատարեան

Գ Ի Տ Ն Ա Կ Ա Ն

ԱՍՏՂԱՐԱՇԻԱԿԱՆ ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ.

(Շարժակ. Արարար, Դէպք. Թ.)

Ե.

ԱՍՈՒՊԳ

Ամեն ոք տեսած է հարկաւ ասուպներն, որք մանաւանդ գարնան եւ աշնան պարզ գիշերներն կ'երեւին երկնից երեսը, երբեմն աստղի նման պայծառ մարմիններ, որք յանկարծ ամենաստտիկ արագութեամբ երկնից մի կետէն դէպ ի միւսն իսոյս կ'տան եւ 1—2 վայրկեանի չափ լուսաւոր հետք մ' եւս կ'թողուն իւրեանց ետեւէն եւ իսկոյն կ'աներեւութանան: Սոցա չափէ դուրս պայծառութիւնն, իւրեանց գծած լուսաւոր կամ հրեղէն հետքը, եւ մանաւանդ սլացման ամենաստտիկ արագութիւնն ու շարժումն մարդոյս երեւակայութեան վերայ մեծ տպաւորութիւններ գործած եւ զանազան մեկնութեանց՝ նշանակութեանց եւ առասպելեաց առիթ ու առարկայ եղած են հին ժամանակ-

Արդէն ծովու մէջ, ծովու

Պապուտակ ծովու (ծով կենցաղոյս)

Գովելին կենցաղոյս

Թիաւարէին, նաւէին հիւր նաւաւարք

Հեռի քաղաքներէն, — Խորայել աղգաւ

Նաւարկէին հիւրերը

Գէպի Երուսաղէմ քաղաք, քարաշատն Մոսկուա,

Եկին նորա այն հողապատ բանտը.

Ահսան պահապաններն հարցնել.

Ո՞վ դուք պահապանք եւ այլն: